ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
ՀԱՍՏՈՑԱՇԻՆԱԿԱՆ
ԳՈՐԾԱՐԱՆ
ԲԲԸ

CMTM
MACHINERY

CHARENTSAVAN MACHINE
TOOL MANUFACTORY

ОАО
ЧАРЕНЦАВАНСКИЙ
СТАНКОСТРОИТЕЛЬНЫЙ
ЗАВОД

№ 3-118
«28» 08 2025թ.

ՀՀ, ք.Չարենցավան, Եսայան փ. 2
RA, Charentsavan, Esayan str. 2
РА, Чаренцаван ул. Есаяна 2
Tel: +37422642797
Mail: info@cmtm.am

« ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 »ՍՊԸ

Տնօրեն Ա.Բաղդասարյանին

Ծանուցում

(Պայմանագիրը միակողմանի լուծարելու մասին)

Հարգելի՛ պարոն **Ա.Բաղդասարյան,**

«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ կարիքների համար ապրանքների ձեռք բերման նպատակով "Գնումների մասին՞՞ ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ և « **ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 »ՍՊԸ** միջև 2025 թվականի հուլիսի 31-ին կնքվել է № ՉՀԳ-ԷԱՃԱՊՁԲ-2025/6-1 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր : Համաձայնագիր կնքելու ծանուցում է ուղարկվել 2025թ.-ի օգոստոսի 1-ին Ընթացակարգի արդյունքում ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշված պաշտոնական <bghda88@gmail.com>էլեկտրոնային փոստին: Միաժամանակ,տեղեկացնում եմ, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում **«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ** Համաձայնագիրը չի ստորագրել և չի ներկայացրել,հետևաբար պայմանագիրը Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է՝ համաձայն Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4- ի N526-Ն որոշման 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.

"Գնումների մասին՞՞ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ,եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5բանկային օրվա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանգրի կատարման/336000դր/ և որոկավորման ապահովումները /504000դր./ ընկերության 1570005356230100 հաշվեհամարին , ապա « ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 »ՍՊԸ չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

X

"ՉՀԳ"ԲԲԸ տնօրենի պաշտոնակատար

Գ.Ղամբարյան